Կազմակերպությունն ունի բազմամյա փորձ ժողովրդավարական բարեփոխումների ոլորտում, կարևորում է դրանց անհրաժեշտությունը և փորձում է իրազեկման արշավների, հանրային քննարկումների և սեմինարների միջոցով ձևավորել համապատասխան հանրային ընկալումներ և, ամենակարևորը, հանրային պահանջ բարեփոխումների շուրջ: Որպես հասարակական կազմակերպություն՝ ԻՔՄ-ն ունի ամենամեծ ներգրավվածությունը Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների գործընթացում և իշխանության ու հասարակության միջև երկխոսության ձևավորման մեջ:

Կազմակերպության տարբեր ներկայացուցիչներ ներգրավվել են պարեկային ծառայողների ընտրության հանձնաժողովի կազմում, ոստիկանությանը կից հասարակական խորհրդում և տարբեր ուղղություններով և ձևաչափերով ապահովում են կազմակերպության ներգրավվածությունն ու մասնակցությունը բարեփոխումների ոլորտում առհասարակ:

2020թ.-ին ՀՀ վարչապետի որոշմամբ՝ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» ի դեմս Դանիել Իոաննիսյանի, ներգրավվել է ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհրդում (մինչ 2023 թ.-ի հունվար).

http://www.irtek.am/views/act.aspx?aid=106627,
https://www.e-gov.am/decrees/item/22473/,
https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2020/08/903.pdf

2020-2022թթ.-ին կազմակերպության ներկայացուցիչները ներգրավված են եղել պարեկային ծառայության ընդունելության հանձնաժողովնեում:

Կազմակերպությունը պատրաստել է Ոստիկանության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ տեղեկանք, որը 2021թ.-ի սեպտեմբերին շրջանառվել է ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհրդում և հիմք է հանդիսացել ոստիկանության բարեփոխումների աշխատանքային խմբի ձևավորման համար: Այն չի հրապարակվել:

2021–2022թթ.-ին կազմակերպությունն անդամակցել է Արդարադատության փոխնախարարի գլխավորությամբ գործող **Ոստիկանության բարեփոխումների աշխատանքային խմբին:**

2021 թ.ին կազմակերպությունը մասնակցել է Պարեկային ծառայության կանոնադրության մշակմանը, որի ընթացքում ներկայացված առաջարկություններն ընդունվել են

2022 թ.-ին կամզակերպության կոմից կազմակերպվել է այց կրթահամալիր բարեփոխումների պատասխանատուների մասնակցությամբ. https://uic.am/15025

2022թ.-ին պարեկային ծառայության ներդրման և ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ կազմակերպությունն ունեցել է հանդիպումներ ՀՀ մազրերում.
https://www.facebook.com/watch/live/?ref=watch_permalink&v=496404645403459
https://www.facebook.com/watch/live/?ref=watch_permalink&v=465875268351009

2022թ.-ին կազմակերպվել է պարեկային ծառայության ներդրման վերաբերյալ հանդիպում մարզպետների և ոստիկանության և արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ՝ https://uic.am/15082

2022թ-ին կազմակերպությունը պարեկային ծառայողների ընդունելության հարցազրույցների, պետական ատեստավորման քննությունների վերաբերյալ ներկայացրել է առաջարկներ, որոնց մի մասն ըդունվել է:

2022թ-ին կազմակերպության ներկայացուցիչները մասնակցել են ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ խորհրդարանական լսումներին և հանդես եկել ելույթով. https://www.aravot.am/2022/07/12/1279669/

2022-ին կազմակերպությունը ոստիկանության բարեփոխումների աշխատանքային խմբի կազմում այցելել է Լոռու պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման կենտրոններ՝ տեղում ուումնասիրելով խնդիրները https://www.facebook.com/watch/?v=5272350749526484

2022-ին կազմակերպության առաջարկները Roadpolice հավելվածի վերաբերյալ ընդունվել են.
https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168345

2023թ.-ից ի վեր կազմակերպությունը ընդգրվել է ոստիկանության ծառայողների ատեստավորման հանձնաժողովի կազմում.
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178696

2023թ.-ին կազմակերպությունը ընդգրկվել է ՆԳՆ քաղաքացիական ծառայության պաշտոններում թեկնածուների հետ հարցազրույց անցկացնելու նպատակով՝ կազմված մի շարք հանձնաժողովներում:

Կազմակերպությունը իրականացնում է նաև **հանրային իրազեկում**.

- Պարեկների համար չկան արտոնյալներ ու անպատժելիներ (տեսանյութ). https://youtu.be/8dD4ybVqjZo?si=6S1RE1PR6zyrg5op
- «Ոստիկանության բարեփոխումները և Ներքին գործերի նախարարության ստեղծումը» (հանրային քննարկում) - https://uic.am/11425
- Ոստիկանական բարեփոխումներ, որոնք ոչինչ չեն փոխել - https://www.youtube.com/watch?v=vzKivqf9bg8
- «Ոստիկանության ներսից լրջագույն դիմադրություն կա այս ռեֆորմին» Դանիել Իոաննիսյան - https://www.youtube.com/watch?v=LX_cRXrvWJg
- Հանձնաժողովը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնի համար ստացել է 3 հայտ, այդ թվում՝ ՀՔԾ պետ Սասուն Խաչատրյանից - https://www.azatutyun.am/a/31412924.html
- Հայտարարվել է 2 մրցույթ,ընտրվել՝ոչ մրցութային տարբերակ. պարեկային մեքենաների դիզայնը կարող է փոխվել - https://www.youtube.com/watch?v=eksrqREw5I8
- Ոստիկանների թիվը պակասել է, բայց պարեկային հերթափոխերի թիվը՝ ավելացել - https://uic.am/14151
- Օրենքների խախտումներ՝ թեքանշանի, համազգեստի, մեքենաների դիզայնի ու փարոսիկների շուրջ - https://uic.am/14132
- Ինչպես փոշիացնել հարկատուների փողերն ու փչացնել դիզայնը - https://uic.am/14055
- Կազմակերպությունը հայտարարություն է տարածել ոստիկանության անօրինական գործողությունների վերաբերյալ՝ «35 ՀԿ պահանջում են ոստիկանապետի պաշտոնանկությունը» - https://uic.am/16163
- Ի՞նչ անել, եթե ոստիկանության բաժնում ենթարկվել եք բռնության https://youtu.be/omwqGuHpi6E?si=8w_wrvV4eHoPmgx2
- Ինչպես դիմել ոստիկանություն https://youtu.be/FBsWvw-3gJ0?si=5ItdKKPKBK2Ial8J
-

**Իրականացված ծրագրեր**.

2018-2019թթ. կազմակերպությունը ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում իրականացրել է «Պայքար կոռուպցիայի դեմ քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու միջոցով» ծրագիրը, որի շրջանակներում ստեղծվել է Ում դիմել կայքը՝ www.umdimel.am :

Կայքում հանրամատչելի կերպով ներկայացված են տարբեր իրավիճակներում հայտնված քաղաքացիների համար նախատեսված խորհուրդներ, որոնք միտված են բարձրացնելու քաղաքացիների իրազեկվածությունը և կանխելու կոռուպցիոն ռիսկերը մի շարք հանրային ոլորտներում:

2020 թ-ից «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը իրականացնում է «**Արտաքին քաղաքականության և ժողովրդավարական բարեփոխումների շուրջ հանրային քննարկումների խթանում**» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվում են հանրային քննարկումներ բարեփոխումների վերաբերյալ, ինչպես նաև պատրաստվում են տեսանյութեր հանրության իրազեկման նպատակով:

Վերլուծական հոդվածներ՝

- Ոստիկանների թիվը պակասել է, բայց պարեկային հերթափոխերի թիվը՝ ավելացել. https://uic.am/14151
- Պարեկայինը արդարացնում է սպասելիքները. 8 ամիսները՝ թվերով. https://uic.am/15158
- Ճանապարհային խախտումների ահազանգման բջջային հավելվածի մեկ տարին. ինչ է եղել և ինչ է լինելու. https://uic.am/16409
- Պարեկայինը Լոռիում ու Շիրակում. բացահայտման 14-ապատիկ աճ. https://uic.am/16536
- Վահե Ղազարյանն ընդդեմ պարեկայինի՝ թվերով. https://uic.am/16673
- Պարեկներին դրդում են ծառայել ոչ թե բովանդակության, այլ ձևի համար. https://uic.am/17112
- Պարեկային ծառայությունը ծանրաբեռնվում է կողմնակի գործառույթներով. https://uic.am/18127
- ՆԳՆ-ն թույլատրում է ոստիկաններին խախտել ՃԵԿ բոլոր կանոնները. https://uic.am/18401
- ՆԳՆ-ն չի վերահսկում, թե ովքեր են կայանում տաքսիների կայանատեղերում. https://uic.am/19030

Սոցիոլոգիական հետազոտություն՝ իրավապահ համակարգի գործունեության ընկալման և վերաբերմունքի, ՀՀ արտաքին քաղաքականության և ՀՀ բնակչության մեդիագրագիտության վերաբերյալ. https://uic.am/18548

Տեսանյութեր

- Պարեկների համար չկան արտոնյալներ ու անպատժելիներ https://www.youtube.com/watch?v=8dD4ybVqjZo
- Նշանակումները ուժային կառույցներում https://www.youtube.com/watch?v=4marJqF6VFQ
- Պարեկների լիազորությունները https://www.youtube.com/watch?v=fhNp5IdaM9k

Հանրային քննարկումներ

- Քննարկում մարզերում Պարեկային ծառայության ներդրման վերաբերյալ https://uic.am/15082
- Քննարկում դատաիրավական բարեփոխումների և Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ. https://uic.am/15948
- Ոստիկանության դերը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման գործում. https://uic.am/17954
- Ոստիկանական բարեփոխումների խնդիրները, հաջողությունները և ապագան . https://uic.am/17295

2020-2021 թթ.-ին «Իրազեկ քաղաքացիների միավորումն» իրականացրել է «Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) հաշվետու կատարման ապահովում» ծրագիրը, որի շրջանակներում մշտադիտարկման են ենթարկվել սահմանադրական, իրավապահ համակարգի, ընտրական բարեփոխումների, ինչպես նաև հավաքների ազատության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտները:

2020 – 2021 թթ-ին կազմակերպությունն իրականացրել է «Բարեփոխումների թափանցիկության բարձրացում՝ հանրության ներգրավվածության միջոցով» ծրագիրը, որի շրջանակներում կարևորելով երկրում ընթացող բարեփոխումների վերաբերյալ հանրության իրազեկվածությունն ու ներգրավվածությունը՝ պատրաստվել է www.reforms.am կայքը, որտեղ համառոտ և մանրամասն ներկայացված են յուրաքանչյուր ոլորտի բարեփոխումները: Ծրագրի շրջանակներում նաև կազմակերպվել են սեմինար-քննարկումներ ոստիկանության և ընտրական բարեփոխումների վերաբերյալ:

2020 թ-ից կազմակերպությունն իրականացնում է նաև «Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում» ծրագիրը, որի շրջանակներում իրազեկում ենք հանրությանը իրականացվող բարեփոխումների վերաբերյալ՝

տեսանյութերի միջոցով, կազմակերպում հանրային քննարկումներ ուսանողների և սեմինար-քննարկումներ լրագրողների և թվային հեղինակությունների համար, ինչպես նաև փորձում ենք կանխել բարեփոխումների գործընթացի վերաբերյալ ապատեղեկատվությունը:

- Ինչպես «կարդալ» բարեփոխումները. ընտրություններ, կուսակցություններ, ոստիկանություն. https://uic.am/12470
- Հանրային քննարկում ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում՝ ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ. https://uic.am/14651
- Հանրային քննարկումներ ԳՊՀ-ում ու ՄՊԲՔ-ում՝ «Պարեկային ծառայության ներդրումը ՀՀ մարզերում» թեմայով. https://uic.am/15058
- Հանրային քննարկում Տավուշի մարզում ոստիկանության բարեփոխումների և Պարեկային ծառայության՝ Հայաստանի մարզերում ներդրման վերաբերյալ. https://uic.am/15230
- Հանրային քննարկումներ Վայոց Ձորի մարզում ոստիկանության Պարեկային ծառայության ներդրման վերաբերյալ. https://uic.am/16353
- Ճանաչողական այց ոստիկանության ակադեմիա՝ ՇՊՀ ուսանողների համար. https://uic.am/13669
- Ճանաչողական այց ոստիկանության ակադեմիա՝ ՎՊՀ և ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի ուսանողների համար. https://uic.am/13813
- Հանրային քննարկում և ճանաչողական այց ուսանողների համար՝ բարեփոխումների վերաբերյալ. https://uic.am/14347
- Ճանաչողական այց ոստիկանության ակադեմիա՝ Գավառի պետական համալսարանի ուսանողների համար. https://uic.am/14799
- Հանրային քննարկում՝ «Ոստիկանական բռնություններ. նոր ալիք, թե՞ հին ավանդույթներ» խորագրով. https://uic.am/18906
- ՆԳՆ-ի անդրադարձը նախարարությունում ընթացող բարեփոխումների շուրջ հանրության իրազեկվածությանն ուղղված դասընթաց-քննարկմանը. https://uic.am/32533

2022թ.-ից սկսած Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության

և «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվում է ամենամյա «**Ժողովրդավարության հայկական ֆորումը**», որը նպատակ ունի աջակցել համազգային համընդգրկուն երկխոսությանը՝ միավորելով քաղհասարակության, ԶԼՄ, դիվանագիտական համայնքի և ՀՀ օրենսդիր ու գործադիր մարմինների շահագրգիռ կողմերին՝ համատեղ վերլուծելու և համակարգելու երկրի առջև ծառացած ժողովրդավարական բարեփոխումների ամենահրատապ մարտահրավերներին ուղղված արձագանքները:

https://uic.am/15667
https://uic.am/17091
https://uic.am/19353

2023-2024թթ. կազմակերպությունը ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ իրականացրել է «Պայքար կոռուպցիայի և մարդու իրավունքների խախտումների դեմ՝ քաղաքացիների ներգրավման միջոցով» ծրագիրը, որը միտված է հանցագործությունների վերաբերյալ ազդարարման և իրավապահ մարմինների հետ քաղաքացիների համագործակցության խթանմանը:

- Սպանությունները քննվում են դանդաղ և անարդյունավետորեն. բացահայտման տենդենցները Հայաստանում. https://uic.am/19190
- Քաղաքացիների հետ իրավապահ մարմինների համագործակցության խոչընդոտներն ու դրանց վերացման առաջարկները. https://uic.am/32188
- Քաղաքացի-պետություն պոդքաստների շարք. https://youtube.com/playlist?list=PLnydyNTtHdpkpPy5Yd4WLVzHrZNILSa5T&si=jKFsdR5xQIBrIxDk

Ի դեմս կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը ներգրավված է ՆԳՆ կարգապահական հանձնաժողովում:

Կազմակերպությունը ի դեմս Հայկ Պետրոսյանի ներգրավված է Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կանխարգելման աշխատանքային խմբում ինչպես նաև ներգրավված է եղել վերակազմավորված ներքին գործերի նախարարության

կրթահամալիրի կադրերի ընտրության 2025թ մարտ-ապրիլ ամիսներին գործած հանձնաժողովում:

Կազմակերպությունը 2025-թ ընթացքում հանդես է եկել մի շարք նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկներով և առանձին կարգավորումների առաջարկներով և նախաձեռնություններով:

Այդ թվում ՝ Ոստիկանության ծառայողի վարքագծի կանոնագիրքը հաստատելու մասին ներքին գործերի նախարարի հրամանի նախագծի, ոստիկանության կարգապահական կանոնագրքում փոփոխությունների վերաբերյալ առաջարկներով:

Կազմակերպությունը մշակել է հատուկ կտրոնների և օպերատիվ համարանիշերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների փաթեթ:

Կազմակերպությունը հանդես է եկել ծառայողական քննության ներքո գտնվող ոստիկանության ծառայողներին կարգապահական պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն տվող՝ իր իսկ կողմից հայտնաբերված օրենսդրական սողանցքի վերացմեն առաջարկով, որն արժանացել է ՆԳՆ հավանությանը և նախարարության կողմից նախաձեռնվել են կարգավորումների փոփոխություններ օրենքի բացի վերացման ուղղությամբ:

Կազմակերպությունը նաև ներգրավված է սույն թվականի դեկտեմբերի 15-ին մեկնարկած Համայնքային ոստիկանության և Քրեական ոստիկանության ծառայողների նշանակման հարցազրույցների հանձնաժողովներում: